ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2026 թվականի №---Ա

«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԳՈՐԾԱՐՔԻ ԿՆՔՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2026 թվականի հուլիսի 23-ի №0490-07/26 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) է ներկայացրել Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող 10 000 (տասը հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության օգտին գրավադրման գործարքին համաձայնություն տալու հայտ (այսուհետ՝ Հայտ),

բ) «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանն ուղղված Հանձնաժողովի 2026 թվականի հուլիսի 26-ի №ՄՄ/34.2-Մ2-8/3985-2026 գրությանն ի պատասխան վերջինս նույն թվականի օգոստոսի 10-ի №01/11.1/5581-2026 գրությամբ հայտնել է, որ Հայտի վերաբերյալ առարկություններ չունի՝ գրությանը կից ներկայացնելով Հայտի առնչությամբ ազգային անվտանգության շահերին սպառնալու տեսանկյունից առարկություններ չունենալու վերաբերյալՀայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության դիրքորոշումը,

գ) Հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ գործարքի կնքման համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 14-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ

հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 9-ի №56-Ն որոշումը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող 10 000 (տասը հազար) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի՝ «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության օգտին գրավադրման գործարքին:
2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքման ժամկետը չի կարող գերազանցել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեց ամիսը:
3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել համապատասխան պայմանագրի (պայմանագրերի) պատճենը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2026թ.